ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ՝ 2020-2022ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտերի) ուսումնասիրության և ս.թ. հունիսի 11-ին Հատուկ քննչական ծառայությունում (այսուհետ՝ ՀՔԾ) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում Հայտերի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Նախ նշենք, որ ՀՔԾ-ն իր պաշտոնական համացանցային կայքէջում ամբողջովին չի տեղադրել 2020-2022թթ, միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի ֆինանսավորման հայտը, որը հանդիսանում է հրապարակայնության սկզբունքի խախտում: Հայտի մասնակի տեղադրումը պարագայում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հնարավորություն չեն ստանում ամբողջական ծանոթանալ Հայտերին և համապարփակ առաջարկություններ ներկայացնել միջնաժամկետ ծախսային ծրագրերի վերաբերյալ:[1] Ուստի միջնաժամկետ ծախսերի վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները կներկայացվեն՝ հիմք ընդունելով ՀՔԾ պաշտոնական կայքէջում ներկայացված մասնակի տեղեկությունը:

Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում

1. ՀՔԾ պաշտոնական կայքէջում զետեղված մասնակի տեղեկատվությունից պարզ է դառնում, որը Հայտերը մշակելիս հիմք են ընդունվել ՀՔԾ-ի մասին օրենքի առանձին հոդվածներ:[2] Մինչդեռ հայտ կազմելիս պետք էր աջարդնորդվել ՀՀ Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիրով և ռազմավարական նշանակության այլ փաստաթղթերով: Առաջարկում ենք Հայտեր մշակելիս առաջնորդվել ՀՀ Կառավարության ծրագրով (մասնավորապես 3-րդ բաժինով, որը վերաբերվում էր Կոռուպցիայի դեմ պայքարին և 4.1 բաժնով, որը վերաբերվում է օրենքի առջև բոլորի հավասարությանը, արդարադատությանը և մարդու իրավունքերի պաշտպանությանը), ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայով (մասնավորապես՝ 5-րդ գլխով, որը վերաբերվում է ակտիվների վերադարձին և 20-րդ հոդվածը, որը վերաբերվում է ապօրինի հարստացմանը)[3] և Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (մասնավորապես՝ Համաձայանգրի 4-րդ հոդվածով, որը վերաբերվում է իրավապահ մարմիններում և դատական համակարգում բարեփոխումների առաջընթացի ապահովմանը):[4]

---

[1] Տե՛ս սույն հղմամբ՝ http://www.ccc.am/hy/1428493746/37/6055:

[2] Տե՛ս սույն հղմամբ՝ http://www.ccc.am/uploaded/havelvacner%202020-2022%20byuje.pdf :

[3] Տե՛ս սույն հղմամբ՝ https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf:

[4] Տե՛ս սույն հղմամբ՝ https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf:

2. **Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ**

ՀՔԾ կայքէջում զետեղված Աղյուսակ Ա.-ից տեղեկանում ենք, որ ՀՔԾ իր ֆինանսական միջոցները նախատեսում է ծախսել 3 ուղղություններով, որոնք են քրեական հետապնդման իրականացումը, վերապատրաստման և հատուկ ուսուցման կազմակերպումը և ՀՔԾ պահուստային ֆոնդին հատկացումներ տրամադրելը:[5] Մինչդեռ պահուստային ֆոնդի գոյացումը կարգավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կազմելով պետական մարմնի համար հատկացված տարեկան բյուջեի 2 տոկոսը: Այսինքն, այն ֆիքսված ֆինանսական միջոց է, ոչ թե ծրագրերով սահմանված միջոցառում, որով նա հասնում է իր ռազմավարական նպատակին: Ծրագրերով սահմանված միջոցառումները պետք է լինեն հստակ և իրականանալի: Իսկ եթե կան կանխատեսումներ, որ տվյալ միջոցառման համար հետագայում կարող են առաջանալ չկանխատեսված ծախսեր, ապա անհրաժեշտ է նշել և հիմնավորել պահուստային ֆոնդից միջոցներ հատկացնելիս ՀՔԾ-ի ծախսային գերակայությունները: ՀՔԾ կայքէջում զետեղված 1-ին աղյուսակում՝ որպես Ծառայության հիմնական ռազմավարական նպատակ է նշվում Ծառայության սուբյեկտ հանդիսացող անձանց կողմից կատարված հանցագործությունների շրջանակներում նախաքննության իրականացումը: Սակայն բյուջետային ծրագրում կատարվելիք հիմնական փոփոխությունների, կապիտալ բնույթի հիմնական միջոցառումների, ֆինանասական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը լրացված չէ: Անհասկանալի է, թե ինչու միջոցառումներն իրականացող մարմինների անվանումները լրացված չեն: Առաջարկում ենք հստակ սամանել յուրաքանչյուր միջոցառման իրականացումն ապահովող մարմնի անվանումը, քանի որ անհրաժեշտ է հասկանալ, թե ոլորտային թերացումների և/կամ արդյունքային ցուցանիշների չապահովման համար որ մարմինն է կրելու պատասխանատվություն:

Ֆինանսական գնահատականներ և ծախսային արդյունավետություն

3. Անհրաժեշտ է նշել, որ ՀՔԾ 2019, 2020, 2021, 2022 թվականների ծախսային մասերում ամենաքիչ գումարը հատկացվում է վերապատատրաստումներին և մասնագիտական ուսուցմանը: Ծառայության գործունեության որակը բարձրացնելու տեսանկյունից կենսական նշանակություն ունի Ծառայությունում աշխատող արհեստավարժ կադրերի առկայությունը: Մինչդեռ Ծառայության հատկացրած դրամական միջոցներով անհնար է հասնել այդ նպատակին: Առաջարկում ենք հատուկ ուշադրություն դարձնել ֆինանսական համալիր միջոցների հատկացումը ՀՔԾ աշխատակիցների վերապատրաստման համար՝ հիմք ընդունելով վերապատրաստումների շարունակական լինելը, նորարարական եղանակներով գործերի քննության եղանակներին ծանոթացնելը, Հայտերում ներառել վերապատրաստման մասը կազմող 1 դասընթացի արժեքը, միջին տևողությունը և այլ չափանիշներ, որոնք հնարավորություն կտան հստակ և իրական հաշվարկներ ու կանխատեսումներ կատարել 1 վերապատրաստման վրա ծախսվող արժեքի վերաբերյալ:

Ապօրինի հարստացման հանցակազմի քննությունը բավականին մեծ դժվարություններ է առաջացնում պրակտիկայում: Այս մասին է վկայում Տնտեսական համագործակցության և

[5] Տե՛ս սույն հղմամբ՝ http://www.ccc.am/uploaded/2020-2022%20byuje%20axyusak%20A_1.pdf:

զարգացման կազմակերպության 2018 թվվականի զեկույցը, որտեղ նշվում է, որ մինչ օրս ապօրինի հարստացման ոչ մի գործ դատական քննության առարկա չի դարձել և միայն հարուցված 2 քրեական գործեր գտնվում են նախաքննություն իրականացնող մարմինների վարույթներում: [6]

«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում նշվում է, որ կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման բացահայտման համար անհրաժեշտ է մշակել քննության մեթոդիկա և մշակված մեթոդիկայի հիման վրա վերապատրաստել քրեական հետապնդում իրականացնող մարմիններին:[7] Ուստի անհրաժեշտ է վերանայել ՀՔԾ Հայտեր և ավելի մեծ գումարներ հատկացնել մասնագիտական վերապատրաստումներին:

[6] Տե՛ս սույն հղմամբ՝ https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf, էջ 121:

[7] Տե՛ս սույն հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/1733: